ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 170 -Ա

ք.Արտաշատ

23 հունիսի 2025թ.

ԾՈՎԻՆԱՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ԱՐԱՐԱՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129–Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 85-րդ կետով, հիմք ընդունելով 2025 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Արարատի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի թիվ 3 որոշումը և Ծովինար Վլադիմիրի Ալեքսանյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ծովինար Վլադիմիրի Ալեքսանյանին 2025 թվականի հունիսի 23-ից ազատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Արարատի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից և լուծել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. 2025 թվականի հունիսի 23-ից Ծովինար Վլադիմիրի Ալեքսանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Արարատի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

23.06.2025

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ